ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ ԷՄ13/3085-21 առ "24" 11 2021թ.

«Սյունիտեք» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Ա. Ալեքսանյանին

Ձեր _____ առ "___" _____ 2021թ.

[№01/263 առ 29.09.2021թ. պայմանագրի
միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Ալեքսանյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռք բերման նպատակով, ս/թ սեպտեմբերի 29-ին մեր միջև կնքված թիվ 01/263 պայմանագրով՝ 820 480 (ութ հարյուր քսան հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, Ձեր կողմից ս/թ նոյեմբերի 11-ին մատակարարված պայմանագրի 20-ից 23-րդ չափաբաժիններով նախատեսված գրիչները չեն համապատասխանում պայմանագրի պահանջներին և ենթակա են վերադարձման: Մյուս չ/բ-երի ապրանքների դիմաց վճարում իրականացնելու նպատակով առաջարկում ենք փոխել Ձեր կողմից նոյեմբերի 11-ին դուրս գրված թիվ Ա 3746036901 հաշիվ-ապրանքագիրը՝ դուրս գրելով ճշգրտված հաշիվ նվազեցումով:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>
- 2.1.7 կետի <<Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

  2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) <<Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում>>;

բ) <<Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելին>>

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Սյունիտեք» ՍՊԸ-ի հետ 2021թ. սեպտեմբերի 29-ին կնքած թիվ 01/263 պայմանագիրը 20-ից 23-րդ չափաբաժինների մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ ԳԲ 2-րդ կարգի մասնագետ՝
Կ. Համբարձումյանը,
+374 10 28 – 29 - 60